ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2024/110

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիսի 2024 թ. N 110

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	**«Ավանդական բժշկության համալսարան» ԱԿ**
Գործունեության հասցեն՝	ՀՀ, ք. Երևան, Բաբաջանյան 38ա
Նախորդ հավատարմագրման մասին՝	պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում
որոշումը և ժամկետը՝	2 տարի ժամկետով՝ 15.01.2021-15.01.2023

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2023 թվականի հոկտեմբերի 16-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց **«Ավանդական բժշկության համալսարան» ԱԿ**-ի (այսուհետ՝ ԱԲՀ, Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	28 մարտի 2023 թ.
ինքնավերլուծության ներկայացում՝	24 հուլիսի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում՝	28.11-01.12 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	06 մարտի 2024 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝	03 ապրիլի 2024 թ.

«Ավանդական բժշկության համալսարան» ԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:
Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից անբավարար են գնահատվել **«Հետազոտություն և զարգացում» և «Արտաքին կապեր և միջազգայնացում»** չափանիշները:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Համալսարանի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ԱԲՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Համալսարանը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում**

ԱԲՀ-ն իր առաքելությանը համապատասխան իրականացնում են անընդհատ և ինտեգրացված «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտական կրթական ծրագրերը: Նախորդ հավատարմագրումից հետո բուհը վերանայել է կրթական ծրագրերը՝ մասնավորապես տարանջատելով ընդհանրական, ընդհանուր մասնագիտական և մասնագիտական վերջնարդյունքները:
Փոփոխություններ է իրականացրել նաև ավանդական բժշկության կրթամասի առարկաներում՝ դրանք տեղափոխելով կամընտրական հատված և հնարավորություն տալով փոխկապակցել դասական բժշկությունը գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության գիտելիքներին:
Ավելացվել են գործնական դասաժամերը, պրակտիկայի ժամաքանակը, ինչպես նաև կրթական ծրագրերում ավելի շատ են ներդրվել իրավիճակային դեպքերն ու խնդիրները: Բարելավվել են ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման գնահատման չափանիշներն ու բաղադրիչները: Քայլեր են իրականացվել կրթական ծրագրերի համեմատական վերլուծության ուղղությամբ:

Սահմանված ու գործում են դասախոսական կազմի ընտրության համապատասխան պահանջներ և ընթացակարգեր: ՊԴ կազմի համալրվում է բժիշկ մասնագետներով: Միաժամանակ, դեռ ոչ բոլոր առարկաների դասավանդման համար է հաջողվել բավարար չափով լավագույն կադրեր ընդգրկել: Գործում են դասախոսական կազմի գնահատման և լավ փորձի տարածման որոշ մեխանիզմներ: Բուհն աջակցում է դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացին, սակայն հարկ է նաև բարելավել դասախոսների օտար լեզվի իմացությունը:

Բուհում արդիականացվել են լաբորատորիաները, ռեսուրսների խոշոր բարելավում է նոր մասնաշենքի կառուցումը: Առկա է կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ միջավայր: Կլինիկական գործնական պարապմունքների անցկացման համար կնքվել են պայմանագրեր 3 հիվանդանոցների հետ:

2. Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը

ԱԲՀ-ն կրթական ծառայություններ է մատուցում ՀՀ ՈԱԾ 6-րդ, 7-րդ մակարդակներում: Ներկայումս բուհն առավելապես թիրախավորում է միջազգային աշխատաշուկան և արտերկրից դիմորդների ներգրավումը: Գործունեության վեկտորի նման փոփոխությունը նպաստել է դիմորդների կայուն հոսքին ու բուհի գործունեության շարունակականության երաշխավորմանը:

Նախորդ հավատարմագրումից հետո էականորեն բարելավվել են բուհի ռազմավարական պլանավորման և կառավարման գործընթացները, սակայն ԳԱՑ-երի վրա հիմնված ռազմավարական կառավարումը դեռևս արմատավորված չէ: Բուհի կառավարման, զարգացման, ռեսուրսների տնօրինման վերաբերյալ որոշումները դեռևս կայացվում են միանձնյա կառավարման սկզբունքով: Բուհն իր կառավարման գործընթացների հիմքում ձգտում է մեծացնել կոլեգիալ կառավարման սկզբունքները՝ այդպիսով փորձելով մասնակցային դարձնել որոշումների կայացման գործընթացը:

Տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմներ և համակարգեր գործում են, սակայն դրանք ճիշտ թիրախավորման կարիք ունեն:

Նախորդ հավատարմագրումից հետո համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում փորձ է կատարվել ներդնել որակի ապահովման մշակույթի ձևավորման տարրեր: Որակի ապահովման համակարգի գործունեության համար բուհը մշակել է համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր, որոնցով սկսել է աշխատել վերջին երկու տարիներին:

Հատկացվել են համապատասխան ռեսուրսներ որակի ապահովման համար:

Իրականացվել են շահակիցների հետ քննարկումներ, հարցումներ, մշակվել և հաստատվել են ընթացակարգային ու ձևաչափային փաստաթղթեր:

Ներքին շահակիցների կարիքների վերհանումը զգալի չափով ապահովել է նաև ՄԿԾ-ների բարելավումը, առկա են ՊԻԳԲ շրջափուլի որոշ օրինակներ:

Որակի ապահովման համակարգը նպաստում է ներքին շահակիցների կարիքների վերհանմանը և կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

3. Միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը

ԱԲՀ-ում կրկնակի անգամ աճել է ուսանողների թիվը, սովորողների զգալի մասը օտարերկրացի ուսանողներ են 17 երկրից: Տեղացի ուսանողները սովորում են միայն «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրում, տեղացի դիմորդների թիվը նվազման միտում ունի: Ուսանողներն ապահովվում են բավարար աջակցությամբ, զգալի չափով ազդում են ծրագրերի, դասավանդման արդիականացման վրա:

Հետազոտության զարգացման նպատակով բուհի կողմից սահմանված նպատակները և տրամադրվող ռեսուրսները դեռևս փոխկապակցված չեն և չեն ապահովում սահմանված ուղղություններով հետազոտությունների խթանումն ու իրականացումը: Բուհի ամբիոնային հետազոտական ուղղությունները դեռևս հստակեցված չեն, դասախոսներն ակտիվորեն ներգրավված չեն հետազոտական աշխատանքներում: Դասախոսներն իրենց հետազոտական աշխատանքներն իրականացնում են ոչ թե բուհում կամ բուհի կողմից տրված ֆինանսական ռեսուրսներով, այլ ԳԱԱ ինստիտուտներում և ԵՊՀ-ում: Խրախուսման մեխանիզմները դեռևս չեն հանգեցրել հետազոտական ուղղությամբ աշխատանքների ավելացմանը և բուհի համար առանջնահերթություն հանդիսացող ուղղություններով գիտական արդյունքների

ձեռքբերմանը: Թեև բուհն ունի համապատասխան ներուժ՝ 28 գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսներ, որից 6-ը գիտությունների դոկտոր, 22-ը՝ գիտությունների թեկնածու: Թույլ են հետազոտության և ուսումնառության փոխկապակցման մեխանիզմները:

Առկա է հաշվետվողականության համակարգ, գործում է կայքը, ապահովվում է գործընթացների իրականացման մասին թափանցիկությունը:

Բուհում գործում է Գիտաբժշկական ուսումնական կենտրոնը, որը մատչելի բժշկական ծառայություններ է մատուցում հանրությանը՝ օգտագործելով բուհի մարդկային և նյութական ռեսուրսները: Իրականացվող բուժական ծառայությունները վկայում են բուհի սոցիալական պատասխանատվության իրացման մասին:

Միջազգային աշխատաշուկայի (այն երկների, որտեղից բուհն ունենում է դիմորդներ) թիրախային ուսումնասիրություն և դրանց հենքով դիմորդների հավաքագրման, գործատուների հետ համագործակցության կամ կրթական ծրագրերի ճանաչելիությանն ուղղված միջոցառումներ բուհի կողմից դեռևս չեն իրականացվել:

2019-2020 ուստարվա ընթացքում կազմակերպվել է ՄԿԾ-ների համեմատական վերլուծություններ, սակայն իրականացված վերլուծությունները չեն թիրախավորել այն երկրները որտեղ ուսումնառությունն ավարտելուց հետո իրենց աշխատանքային գործունեությունն իրականացնում են բուհի շրջանավարտները:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը հիմնականում իրատեսական է և իրականացումը կբերի որակական բարելավումների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Ավանդական բժշկության համալսարան» ԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Հետազոտություն և զարգացում» և «Արտաքին կապեր և միջազգայնացում»** չափանիշներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
   - **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - գործընկերային գնահատմանը՝ հաշվի առնելով վեր հանված խնդիրները,
   - արտաքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմների կատարելագործմանը, վերհանված կարիքների հիման վրա ռազմավարական պլանավորմանը,
   - գործնական հմտությունների ձեռբերման համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերմանը և գնահատման մեխանիզմների բազմազանեցմանը,
   - կրթական ծրագրերի վերջնարդյունքները սահմանելիս միջազգային աշխատաշուկայի կարիքները հաշվի առնելու անհրաժեշտությանը,

- կրթական ծրագրերում ըստ ուսանողներին տրվող առաջադրանքների դասավանդման և գնահատման մեթոդների հստակեցմանը՝ ներդնելով PBL, CBL, OSCE, OSPE մեթոդները,
- դասախոսական կազմի վերապատրաստումների պլանավորմանը և համապատասխան միջոցների հատկացմանը,
- դասախոսական կազմի խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման մեխանիզմների ու չափանիշների հստակեցմանը,
- կարիքների վերհանման, ուսանողներին մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմների լավարկմանը,
- հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցման անհրաժեշտությանը:

3. Կազմակերպել ԱԲՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով Համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «Ավանդական բժշկության համալսարան» ԱԿ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:
6. Որոշումն ուժի մեջ է մտնում Հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2024 թ. մայիսի 10
ք.Երևան